Գրանցված է

Լեռնային Ղարաբաղի Հանրապետության

արդարադատության նախարարության կողմից

18 հունիսի 2014թվականի

Պետական գրանցման համարը 1041458

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

«12» հունիսի 2014թ. N 47-Ն

ք. Ստեփանակերտ

ԼԵՌՆԱՅԻՆ ՂԱՐԱԲԱՂԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ 2010 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 04-ի N 31-Ն ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Իրավական ակտերի մասին» Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենքի 71-րդ հոդվածին համապատասխան՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2010 թվականի մայիսի 04-ի «Սերմնադաշտերի դաշտային հետազոտություններ կատարողի (ապրոբատորի) հավաստագրման հանձնաժողովի կազմը և աշխատակարգը հաստատելու մասին» N 31-Ն հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) N1 հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

2) N2 հավելվածի՝

ա. 4-րդ և 13-րդ կետերում «հավաստագիր» բառը փոխարինել «վկայագիր» բառով.

բ. 7-րդ կետում «7» թիվը փոխարինել «2» թվով:

2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի իրավաբանական բաժնին՝ սույն հրամանը Լեռնային Ղարաբաղի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել Լեռնային Ղարաբաղի Հանրապետության արդարադատության նախարարություն՝ պետական գրանցման:

Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հավելված
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2014 թվականի հունիսի 12-ի
N 47-Ն հրամանի

«Հավելված N 1
Լեռնային Ղարաբաղի Հանրապետության
գյուղատնտեսության նախարարի
2010 թվականի մայիսի 4-ի
N 31-Ն հրամանի

Կ Ա Զ Մ
ՍԵՐՄՆԱԴԱՇՏԵՐԻ ԴԱՇՏԱՅԻՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐՈՂԻ (ԱՊՐՈԲԱՏՈՐԻ) ՀԱՎԱՍՏԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարի տեղակալ (հանձնաժողովի նախագահ)
2. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության բաժնի պետ (հանձնաժողովի անդամ)
3. «Սերմնաբուծության, սելեկցիոն նվաճումների փորձարկման, պահպանության և սերմերի որակի ստուգման կենտրոն» փակ բաժնետիրական ընկերության գործադիր տնօրեն (հանձնաժողովի անդամ)
4. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության իրավաբանական բաժնի պետ (հանձնաժողովի անդամ)
5. Հայաստանի ազգային ագրարային համալսարանի հիմնադրամի Ստեփանակերտի մասնաճյուղի դասախոս (ըստ անհրաժեշտության)
6. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի բուսաբուծության և բույսերի պաշտպանության բաժնի գլխավոր մասնագետ (հանձնաժողովի քարտուղար): »: